

## CONFINTEA<sup>1</sup> VII-ի Մարաքեշի գործողությունների շրջանակ

### Օգտագործելով մեծահասակների ուսուցման և կրթության փոխակերպող ներուժը

#### Նախաբան

1. Մենք՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 142 անդամ պետությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, սոցիալական գործընկերների, ՄԱԿ-ի գործակալությունների, միջկառավարական գործակալությունների, երիտասարդության և մասնավոր հատվածի ներկայացուցիչներս, հավաքվել ենք **Մարաքեշում՝ Մարոկկոյի թագավորությունում** և առցանց հարթակներում **2022 թ.-ի հունիսի 15-17-ին՝** որպես Մեծահասակների կրթության յոթերորդ միջազգային համաժողովի մասնակիցներ (CONFINTEA VII): Համաժողովը տեղի է ունենում համաճարակի ժամանակներում, որը խորապես ազդել է ամբողջ աշխարհի կրթական համակարգերի, այդ թվում նաև մեծահասակների ուսուցման և կրթության (ՄՈՒԿ) վրա:
2. Մենք հավաքվել ենք ամփոփելու և գնահատական տալու 2009 թ.-ի CONFINTEA VI-ից հետո ՄՈՒԿ-ի գրանցած կարևոր մարտահրավերներին ու առաջընթացին, ինչպես նաև ստեղծելու ճանապարհային քարտեզ առաջիկա 12 տարիներին ՄՈՒԿ-ի առաջխաղացման համար (մինչև 2030-ը և դրանից հետո):
3. Մենք կարևորում ենք **CONFINTEA VI-ի ձեռքբերումները**, (ներառյալ 2009 թ.-ի Բելեմի ՄՈՒԿ գործողությունների շրջանակը՝ որպես կրթության իրավունքի կարևոր բաղադրիչ), ինչպես նաև ՄՈՒԿ գործունեության ոլորտների՝ մինչ օրս էլ արդիական 5 ուղղությունները, այն է քաղաքականություն, կառավարում, ֆինանսավորում, մասնասակցություն, ներառում և հավասարություն, որակ: Մենք նաև արժևորում ենք ՅՈՒՆԵՍԿՕ-ի ՄՈՒԿ համաշխարհային զեկույցը (GRALE), որը ըստ 2009 թ.-ի Բելեմի գործողությունների շրջանակի պարտադիր է և մշտադիտարկում է ՄՈՒԿ զարգացումները:
4. Հիմնվելով GRALE-ի տվյալների վրա՝ մենք արձանագրում ենք **2009 թ.-ից ի վեր ՄՈՒԿ-ի և ցկյանս ուսումնառության առաջխաղացման համաշխարհային ջանքերը**: Դրանք ներառում են միջազգային հանրության՝ Կայուն զարգացման 2030 օրակարգի և վերջինիս կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) շրջանակում ստանձնած հանձնառությունները՝ միջազգային հանրության կողմից ցկյանս ուսումնառության խթանման անհրաժեշտության ավելի լայն ճանաչումը, ԿԶՆ 4-ով սահանված՝ «ներառական ու որակյալ կրթություն բոլորի

<sup>1</sup> Մեծահասակների կրթության միջազգային համաժողով

համար ապահովելու և ցկյանս ուսումնառությունը խթանելու հնարավորությունները», Կրթության հեռանկարների միջազգային հանձնաժողովի զեկույցը, ՄՈՒԿ բարելավված գոբալ մշտադիտարկումը հինգ GRALE-երի միջոցով, Համաշխարհային կրթության մշտադիտարկման (GEM) զեկույցը և այլ նախաձեռնություններ, ներառյալ Գրադիտության համար համաշխարհային դաշինքը Ցկյանս ուսումնառության շրջանակում (GAL), և այլ քայլեր, որոնք ձեռնարկվել են ՄՈՒԿ-ը համաշխարհային կրթության օրակարգում և կառուցվածքում ինտեգրելու համար: Ելնելով այս ամենից՝ Մարաքեշի շրջանակային ծրագրի իրականացման հիմքում պետք է դրվի իրավունքահենք մոտեցումը:

5. Մենք ընդգծում ենք **COVID-19 համավարակի** երկարաժամկետ կառուցվածքային ազդեցությունը և այն հակասական հետևանքները, որ համավարկն ունի ՄՈՒԿ-ի վրա: Համավարակը ևս մեկ անգամ կառավարությունների և համայնքների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է մշակել և իրականացնել գիտելիքի, կարողությունների և կոմպետենցիաների ձեռքբերման ռազմավարություններ, ինչպես նաև ուսումնառության այնպիսի քաղաքականություններ հարցը, որոնք աջակցում են երիտասարդներին և մեծահասակներին՝ հաղթահարելու այս ճգնաժամի ազդեցությունները: Մենք կարևորում ենք նաև հմտությունների կատարելագործման (reskilling) և որակավորման բարձրացման (upskilling) ռազմավարությունների մշակման անհրաժեշտությունը՝ հասարակությունների և հատկապես աշխատաշուկայի փոփոխվող կարիքները հատկապես կանաչ և թվային զարգացումների արդյունք հանդիսացող փոփոխություններին արձագանքելու տեսանկյունից:
6. Մենք անդրադարձ ենք անում 2015 թվականին Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված **Կայուն զարգացման օրակարգ 2030-ին** և 17 ԿԶՆ-ներին հասնելու հանձնառությանը: Մենք գիտակցում ենք, որ ցկյանս ուսումնառությունը խիստ կարևոր է բոլոր 17 ԿԶՆ-ների համար, և որպես ցկյանս ուսումնառության հիմնական դրսևորում՝ ՄՈՒԿ-ը առանցքային է այդ նպատակներին հասնելու համար: Մենք հատկապես վերահաստատում ենք մեր հանձնառությունը ԿԶՆ 4-ի վերաբերյալ, որի միջոցով անդամ պետությունները պարտավորվել են «ապահովել ներառական և հավասար որակյալ կրթություն և խթանել ցկյանս ուսումնառության հնարավորություններ բոլորի համար»: Մենք մտաբերում ենք 2021 թվականի մայիսին ընդունված **Բեռլինի Կրթություն կայուն զարգացման հռչակագիրը**, որը վերահաստատում է կրթության կարևորությունը կայուն զարգացման համար և կոչ է անում մեծահասակ սովորողներին՝ աջակցել ներառված 16 առաջարկությունների իրականացմանը: Մենք նաև ընդունում ենք Կրթության հեռանկարների Միջազգային Հանձնաժողովի «*Վերախմաստավորելով համատեղ ապագայի հեռանկարները. հանրային նոր համաձայնագիր ի նպաստ կրթության*» զեկույցը (ՅՈՒՆԵՍԿՕ, 2021), որը հաստատում է ողջ կյանքի ընթացքում որակյալ կրթության իրավունքը և ընդգծում է կրթության փոխակերպող ներուժը կայուն ապագա կառուցելու համար:

7. Մենք հաստատակամորեն աջակցում ենք Հանձնաժողովի կոչին՝ ապահովելու «գենդերային հավասարություն և իրավունքներ բոլորի համար» մեծահասակների ուսումնառության և կրթության միջոցով՝ գիտակցելով, որ գենդերային նորմերը կարող են ազդել սովորողների՝ կրթության մեջ արդյունավետորեն ներգրավվելու կարողության վրա: Գենդերային-փոխակերպմանը միտված մեծահասակների ուսուցումն ու կրթությունը պետք է լինի համապարփակ, ամբողջական և միջսերնդային՝ միավորելով կրթության դերակատարներին այնպիսի ոլորտներից, ինչպիսիք են առողջապահությունը, պաշտպանությունը և արդարադատությունը:
8. Մենք ընդունում ենք 2015 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր համաժողովի կողմից ընդունված **Մեծահասակների ուսումնառության և կրթության առաջարկությունները (RALE)**՝ ներառյալ նաև ՄՈՒԿ<sup>2</sup>-ի սահմանումը և ուսումնառության 3 ոլորտների տարանջատումը. գրագիտություն և հիմնական հմտություններ, շարունակական կրթություն և մասնագիտական հմտություններ և ազատական, ժողովրդական և համայնքային կրթություն և քաղաքացիական հմտություններ:
9. Մենք վերահաստատում ենք, որ **ՄՈՒԿ-ը ցկյանս ուսումնառության հիմնական բաղադրիչն է**<sup>3</sup>՝ նշելով, որ ՄՈՒԿ քաղաքականությունները և պրակտիկան կիրառվում են տարբեր տարիքի,

---

<sup>2</sup> Մեծահասակների կրթությունը ցկյանս ուսումնառության հիմնական բաղադրիչն է: Այն ներառում է կրթության և ուսումնառության բոլոր ձևերը, որոնց նպատակն է ապահովել բոլոր երիտասարդների և մեծահասակների մասնակցությունը հասարակական կյանքին և աշխատաշուկային: Այն ի ցույց է դնում ուսումնական գործընթացի ամբողջական պատկերը՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ, որի միջոցով նրանք, ովքեր հասարակության կողմից համարվում են մեծահասակ, զարգացնում և հարստացնում են ապրելու և աշխատելու իրենց կարողությունները՝ ինչպես իրենց, այնպես էլ իրենց համայնքների, կազմակերպությունների և հասարակությունների շահերից ելնելով: Մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը ներառում են կարողությունների ձեռքբերման, ճանաչման, փոխանակման և հարմարեցման կայուն գործողություններ և գործընթացներ: Հաշվի առնելով, որ երիտասարդների և մեծահասակների սահմանումները փոփոխական են տարբեր մշակույթներում, այս տեքստում «մեծահասակ» եզրը ցույց է տալիս բոլոր նրանց, ովքեր զբաղվում են մեծահասակների ուսումնառությամբ ու կրթությամբ, նույնիսկ եթե չեն հասել իրավական չափահասության տարիքին: (Հանձնարարական Մեծահասակների ուսումնառության և կրթության համար, 2015, էջ 6):

<sup>3</sup> «Ըստ էության, ցկյանս ուսումնառությունը հիմնված է սովորելու և ապրելու միաձուլման վրա՝ ընդգրկելով բոլոր տարիքի մարդկանց ուսումնական գործունեությունը (երեխաներ, երիտասարդներ, մեծահասակներ և տարեցներ, աղջիկներ և տղաներ, կանայք և տղամարդիկ) կյանքի բոլոր համատեքստերում (ընտանիք, դպրոց, համայնք, աշխատավայր և այլն) և մի շարք եղանակների միջոցով (ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ), որոնք միասին բավարարում են ուսումնառության կարիքների և պահանջների լայն շրջանակ: Կրթական համակարգերը, որոնք նպաստում են ցկյանս ուսումնառությանը, որդեգրում են ամբողջական և ոլորտային մոտեցում՝ ներառելով բոլոր ենթաճյուղերը և մակարդակները՝ բոլորի համար ապահովելու ուսումնառության հնարավորություններ»:

կրթության մակարդակի, ուսումնական միջավայրերի և ոճերի լայն շրջանակի համար, և ընդունելով, որ ցկյանս ուսումնառությունը տարբեր մակարդակներում սովորող հասարակության հիմնական շարժիչն է՝ ներգրավելով անհատներին, ընտանիքներին, կազմակերպություններին, աշխատավայրերին, թաղամասերին, քաղաքներին և շրջաններին:

10. Մենք վճռականորեն հաստատում ենք, որ կրթությունը, ներառյալ նաև ՄՈՒԿ-ը, մարդու հիմնարար իրավունք է՝ հանձնառություն, որը խիստ կարևոր նշանակություն ունի կրթությունը որպես հանրային ձեռնարկում և հանրային բարիք ընկալելու և ձևավորելու համար՝ համաձայն Կրթության հեռանկարների Միջազգային հանձնաժողովը:
11. Մենք նաև գնահատում ենք ՄՈՒԿ միջազգային հանրույթի՝ այդ թվում նաև կառավարությունների և ոչ կառավարական շահագրգիռ կողմերի շարունակական, հարուստ և բազմազան օժանդակությունը և նրանց ներդրումը CONFINTEA VII-ի կազմակերպման համար՝ ներառյալ տարածաշրջանային և ենթատարածաշրջանային նախապատրաստական համաժողովները, որոնց արդյունքում ստեղծված փաստաթղթերը՝ Բելեմի գործողությունների շրջանակը, Սուվոնի CONFINTEA VI-ի միջանկյալ զեկույցը, GRALE-ը, RALE-ը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի *«Վերախմաստավորելով համատեղ ապագայի հեռանկարները. հանրային նոր համաձայնագիր ի նպաստ կրթության»* զեկույցը, հիմք են հանդիսացել այս գործողությունների շրջանակի համար:
12. Այն ժամանակներում, երբ հասարակություններին սպառնում է աճող ֆանատիզմը և բռնություններով լի ծայրահեղականությունը, գիտության հանդեպ անվստահությունը, երկրների ներսում և երկրների միջև աճող անհավասարությունը, մենք վերահաստատում ենք, որ ՄՈՒԿ-ը կարող է հզոր քաղաքական պատասխան տալ սոցիալական համախմբվածության ամրապնդմանը, ուժեղացնել սոցիալ-հուզական հմտությունները, ապահովել խաղաղություն, ամրապնդել ժողովրդավարությունը, բարելավել մշակութային ըմբռնումը, վերացնել խտրականության բոլորը տեսակները և նպաստել համատեղ խաղաղ կյանքին և ակտիվ ու գլոբալ քաղաքացիությանը:
13. Մենք պարտավորվում ենք խթանել Մարաքեշի գործողությունների շրջանակի առաջարկությունները 2022 թվականի սեպտեմբերին կայանալիք Փոխակերպող կրթության գազաթնաժողովին՝ որպես դրա անբաժանելի մասը: Մենք կարևորում ենք այս Շրջանակի կարևորությունը, որը կծառայի որպես տեղեկատու փաստաթուղթ գազաթնաժողովի համար:

## Մկզբունքներ և առաջնահերթ ոլորտներ

14. **ՄՈՒԿ-ի խթանում ցկյանս ուսումնառության տեսանկյունից:** Չնայած նրան, որ Բելլեմի գործողությունների շրջանակի առաջնահերթությունները մնում են արդիական, ԿԶՆ 4-ը եզակի հնարավորություն է տալիս ՄՈՒԿ-ը որպես ցկյանս ուսումնառության հիմնական բաղադրիչ ճանաչելու համար, որը նպաստում է կայուն զարգացմանը և խաղաղության խոստումին, որն ընկած է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կառույցի հիմքում:
  
15. *«Վերափմաստավորելով համատեղ ապագայի հեռանկարները. հանրային նոր համաձայնագիր ի նպաստ կրթության»* զեկույցի բացահայտումներով և առաջարկություններով ոգեշնչված՝ ՄՈՒԿ-ը առանցքային դեր է խաղում հումանիստական արձագանքի գործում՝ հիմնվելով մարդու իրավունքների, ժողովրդավարական հասարակությունների, էթիկական սկզբունքների և կուլեկտիվ ինտելեկտի մոբիլիզացիայի վրա, ինչպես նաև խթանելով բաց երկխոսություն՝ հիմնվելով միջառարկայական գիտելիքի վրա:
  
16. Չնայած վերջին տասնամյակների ընթացքում գրանցված զգալի առաջընթացին, այդ թվում՝ կանանց գրագիտության ոլորտում, շատ երկրներ դեռևս պայքարում են գրագիտության համապատասխան մակարդակի հասնելու համար, ներառյալ թվային գրագիտության, ինչպես նաև պայքարում են գենդերային զգալի անջրպետները կամրջելու համար: 2021 թվականին գրագիտության հիմնական հմտություններ չունեցող ավելի քան 770 միլիոն մեծահասակներից հինգից երեքը կանայք էին (UIS): Գրագիտության առավելությունները անհատների, ընտանիքների, համայնքների, հասարակությունների և մոլորակի համար լավ փաստագրված են, և մեծահասակների գրագիտությունը պետք է ստանա բավարար քաղաքական ուշադրություն և ֆինանսական աջակցություն:
  
17. **Մեծահասակների ուսումնառության և կրթության ներուժի բացահայտում կլիմայի համար տարվող գործողությունների համար:** Կլիմայական փոփոխությունը հսկայական վտանգ է ներկայացնում մարդկության, ինչպես նաև այլ տեսակների համար: Դա մեզ հուշում է կասկածի տակ առնել ընթացիկ արտադրության և սպառման ձևերը, ստեղծել նոր արդյունաբերություններ և ընդունել բարոյական պատասխանատվություն ապագա սերունդների առջև՝ գիտակցելով, որ մոլորակի մասին հոգալը պետք է դառնա համաշխարհային հրամայական: Հետևաբար, կլիմայական կրթությունը պետք է ներառվի ցկյանս ուսումնառության համակարգերում: ՄՈՒԿ-ը պետք է լինի կանաչ վերափոխման մի մաս: Երիտասարդներին և մեծահասակներին տալով խնդրի ըմբռնման հնարավորություն, ՄՈՒԿ-ը բարձրաձայնում նրանց իրազեկվածությունը և զինում այնպիսի գիտելիքներով և գործելու ունակություններով, որոնք անհրաժեշտ են հարմարվելու և հակազդելու կլիմայական փոփոխություններին, ինչպես նաև զարգացնելու դիմակայանությունը և գործելու

կարողությունը: ՄՈՒԿ-ը կարող է մեծ դեր խաղալ մեծահասակների և տարեց քաղաքացիների հզորացնելու գործում՝ որպես օրինակ երեխաների համար և որպես փոփոխություններ բերողներ տեղական, ազգային և գլոբալ մակարդակներում: Համայնքային ուսումնառությունը և քաղաքացիական կրթությունը կարևոր գործոն են կայուն զարգացման համար, ներառյալ նաև գյուղական վայրերի զարգացման և կլիմակայան փոփոխությունների ազդեցությունների մասին իրազեկվածության բարձրացման համար: Ավելին, ՄՈՒԿ հաստատություններն իրենք կարող են օրինակ ծառայել հասարակության կանաչ անցումների համար՝ «կանաչացնելով» ուսումնական ծրագրերը, միջավայրը և կառավարումը:

**18. Բոլոր սովորողների, այդ թվում նաև մեծահասակների համար թվային միջավայրում սովորելու հավասար հնարավորության խթանում:** Տեխնոլոգիան կարևոր փոփոխություններ է մտցնում մեծահասակների ուսումնառության և նրանց ուսուցանելու ձևերի, նրանցից պահանջվող կարողությունների և հմտությունների մեջ: Այն դարձել է հզոր օժանդակող և խթանող միջոց անհատական ուսումնառության համար: Թեև տեխնոլոգիան կարող է առաջընթացի խթան լինել կրթության ոլորտում, այն կարող է նաև ստեղծել նոր խոչընդոտներ, որոնք սոցիալական կամ կոլեկտիվ ուսուցումն ավելի դժվար են դարձնում, ընդլայնում են գոյություն ունեցող սոցիալական բաժանումները և ստեղծում նորերը: Թվային միջավայրերում ուսումնառության համար բոլոր սովորողների հավասար հասանելիությունը չափազանց կարևոր նախապայման է, որը կարևոր նշանակություն ունի ն մեծահասակները որպես ակտիվ անդամներ հասարակության մեջ ներգրավվելու տեսանկյունից: Այն մեծացնում է քննադատական մտածողության, հաղորդակցության, ապրումակցման և սոցիալական հմտությունների կարևորությունը՝ առցանց միջավայրում պատեղեկատվությունների հանդիպելիս ճիշտ կողմնորոշվելու համար: Արդյունավետ ռազմավարությունների, քաղաքականությունների և գործիքների մշակումը, թվային անջրպետի կամրջումը, հասանելիության մեծացումը, առցանց հարաբերություններում առկա անհավասար հարաբերություններին արձագանքը և տեխնոլոգիաների վնասի կանխարգելումը կարևոր նշանակություն ունեն ՄՈՒԿ-ի փոխակերպող և ազատականացնող բնույթը վերահաստատելու համար: Արդյունավետ թվային մանկավարժությունը նույնպես պահանջում է ուսուցման և ուսումնառության նոր մոդելներ՝ դեմառդեմ, հեռավար և համակցված ձևաչափերի համար:

**19. Մեծահասակների նախապատրաստում աշխատաշուկայի ապագա զարգացումների համար:** Ժողովրդագրական տեղաշարժերը, չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը, գլոբալիզացիան և կլիմայի փոփոխությունը խորապես փոխակերպում են տնտեսությունը և աշխատաշուկան: Այս փոխակերպումները մեծ ազդեցություն են ունենում աշխատանքի բնույթի, զբաղվածության կառուցվածքների, աշխատանքի բովանդակության և պահանջվող կարողությունների և հմտությունների վրա: Կրթությունից աշխատանք գծային անցումը, որը տասնամյակների ընթացքում գերիշխող օրինաչափությունն էր, դառնում է ավելի քիչ արդիական, քանի որ մեծահասակների աշխատանքային հետագիծը ավելի ու ավելի բարդ

տեսք է ստանում: Այս համատեքստում ՄՈՒԿ-ի խնդիրը՝ շահագրգիռ կողմերի հետ համատեղ պատասխանատվությամբ, ճկուն կերպով համապատասխան գիտելիքի, կոմպետենցիաների և կարողությունների ընդունելի ձեռքբերումն է ողջ կյանքի ընթացքում, ներառյալ մասնագիտական ուղղորդումը և այլ ուսումնական աջակցություն զբաղվածության, արժանապատիվ աշխատանքի, կարիերայի զարգացման և ձեռներեցության համար: Ժողովրդագրական միտումները նաև ցույց են տալիս, որ ամբողջ աշխարհում մարդկանց կյանքի տևողությունը շարունակում է աճել՝ նպաստելով ծերացող աշխարհի առաջացմանը: Քանի որ գնալով ավելի շատ երկրներում բնակչության զգալի մասը չի աշխատելու, ՄՈՒԿ-ի բնույթը պետք է հարմարեցվի՝ ավելի շատ կենտրոնանալով տարեցների հետաշխատանքային գործունեությանը նախապատրաստելու վրա, այդ թվում աջակցելու նրանց շարունակական իմաստալից ներդրմանը հասարակություններում և ավելի մեծ ուշադրություն դարձնելու նրանց բարեկեցությանը և կյանքի բոլոր ոլորտներից բավականություն ստանալուն: Ավելին, ածխածնային չեզոքության և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով տնտեսության վերափոխումը հրամայական է դարձնելու ներկայումս աշխատաշուկայում ներգրավված մեծահասակների հմտությունների կատարելագործումը (reskilling) և որակավորման բարձրացումը (upskilling):

20. **Ցկյանս ուսումնառության մշակույթի ստեծում:** Ցկյանս ուսումնառությունը առանցքային է լինելու մարդկության առջև ծառայած այնպիսի մարտահրավերներին դիմակայելու համար, ինչպիսիք են կլիմայական ճգնաժամից մինչև տեխնոլոգիական և ժողովրդագրական փոփոխությունները՝ ի լրումն COVID-19 համավարակի արդյունքում առաջացած խնդիրների և դրա հետևանքով առաջացած անհավասարությունների Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ամբողջական մոտեցում՝ ընդգրկելով ՄՈՒԿ բոլոր տեսակները (ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ), և բոլոր ոլորտներն ու բնագավառները, տարբեր ուսումնական վայրերը, ներառյալ դեմադեմ, ինչպես նաև առցանց և համակցված ուսուցումը ուսումնառուների տարբեր խմբերում: Այսպիսով, անհրաժեշտ է ստեղծել ուսումնական միջավայր, որի միջոցով երիտասարդների և տարեցների համար նախատեսված ներառական ու որակյալ կրթությունը և ցկյանս ուսումնառությունը հաստատված են որպես հանրային նախաձեռնություն, որը ծառայում է ոչ միայն աշխատաշուկային, այլև անհատական բարեկեցությանը և հանրային բարիքին:

**Գործողությունների առաջարկներ փոխակերպվող ՄՈՒԿ-ի համար**

Շրջանակների և կառավարման մեխանիզմների ստեղծում

21. Գիտակցելով կրթության համար հանրային նոր համաձայնագրի անհրաժեշտությունը՝ մենք ՅՈՒՆԵՍԿՕ-ին առաջարկում ենք նախաձեռնել համապատասխան փորձագիտական խորհրդատվություններ և միջկառավարական երկխոսություն՝ ցկյանս ուսումնառության առնչությամբ մարդու իրավունքների գոյություն ունեցող շրջանակի ամրապնդման ուղիների շուրջ: Այս գործընթացը պետք է ուսումնասիրի առավելագույն հարմար տարբերակները՝ կյանքի կոչելու ցկյանս ուսումնառության իրավունքի տեսլականը՝ հիմքում ունենալով մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը, հետևաբար ստեղծելով ցկյանս ուսումնառության մշակույթ, որը հարմարեցված է յուրաքանչյուր անդամ պետության:
22. Մենք գիտակցում ենք բազմաոլորտ հարթակների կարևորությունը՝ աջակցելու ՄՈՒԿ-ի կառավարմանը բոլոր համապատասխան և առանցքային դերակատարների հետ, այդ թվում՝ մասնավորապես նախարարությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, երիտասարդությունը, մասնավոր հատվածը, համալսարանները և ՄՈՒԿ մատակարարները: Մենք նաև ընդգծում ենք աշխատողների և գործատուների, ինչպես նաև նրանց միավորող կառույցների միջև երկխոսության կարևորությունը, որը շատ երկրներում աջակցում է ոլորտի կառավարմանը՝ հատկապես շարունակական մասնագիտական զարգացման տեսանկյունից:

#### ՄՈՒԿ համակարգերի վերանախագծում

23. Ընդունելով ՄՈՒԿ մատակարարների աճող բազմազանությունը, որն առաջանում է ուսումնական բարդ էկոհամակարգերի արդյունքում, մենք վերահաստատում ենք, որ անհրաժեշտ է ուժեղացնել կառավարությունների դերը մեխանիզմների ու կանոնակարգերի ստեղծման գործում, ՄՈՒԿ կառույցներին օժանդակող ֆինանսական և մարդկային ռեսուրսների հատկացումների գործում, ինչպես նաև ուժեղացված հանրային կրթության ապահովման շրջանակներում ՄՈՒԿ-ը որպես համընդհանուր և հանրային բարիք կարգավորելու, խրախուսելու, խթանելու, համակարգելու և վերահսկելու գործում:
24. Մենք գիտակցում ենք տեղական մակարդակում ՄՈՒԿ-ի ուժեղացման կարևորությունը՝ որպես ուսումնական ծրագրերի պլանավորման, նախագծման և իրականացման ռազմավարական հարթություն, ինչպես նաև դասընթացներ և ուսումնական նախաձեռնություններ իրականացնող այնպիսի կառույցներին օժանդակելը և (համա)ֆինանսավորելը, ինչպիսիք են համայնքային ուսուցման կենտրոնները, որոնք պետք է ունենան որակավորված լավ ռեսուրսներ մեծահասակների հետ աշխատելու համար: Մենք ընդունում ենք, որ առկա է ուսումնական տարածքների բազմազանություն, այն է՝ Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ), ինչպես նաև բարձրագույն կրթության



հաստատություններ, գրադարաններ, թանգարաններ, աշխատավայրեր, հանրային տարածքներ, արվեստի և մշակույթի հաստատություններ, սպորտ և հանգիստ, խմբակներ, ընտանիքներ և այլն: Մա նշանակում է, որ ինստիտուցիոնալ կարողությունները պետք է ուժեղացվեն բոլորի համար՝ ցկյանս ուսումնառությունը տեղական մակարդակում խթանելու համար: Դրան հասնելու համար, օրինակ, կարելի է խրախուսել սովորելով քաղաքների զարգացումը, ինչպես նաև խթանել տեղական շահագրգիռ կողմերի, ներառյալ սովորողների, համայնքային խմբերի և ինստիտուտների ներգրավումը:

25. Ավելին, հավատարիմ մնալով աշխատանքի տարբեր տեսակների ներսում և դրանց միջև շարժունակության ապահովելու համար ուսումնառության ճկուն ուղիներ ստեղծելու մեր հանձնառությանը, մենք ընդգծում ենք հնարավորության դեպքում նախընթաց կրթության արդյունքների ճանաչման, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացման ու հավատարմագրման կարևորությունը՝ ավելի բաց և ճկուն կրթական էկոհամակարգերում ներառելով բնակչության բոլոր խավերին՝ հատկապես խոցելի և թերներկայացված խմբերին, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող անձինք: Այս առումով հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև բնիկ տեղական համայնքների ընդգրկմանը կրթական և ցկյանս ուսումնառության բոլոր գործընթացներում: Ուսումնառության ճկուն ուղիների ստեղծումը առանցքային է տարբեր կրթական ծրագրերի, ուսումնական մակարդակների, զբաղվածության ոլորտների միջև շարժունության, ինչպես նաև սովորողներին իրենց ուսումնական հետազոտող ընտրելու հնարավորություն տալու համար՝ համաձայն իրենց կարողությունների և հետաքրքրությունների՝ հաշվի առնելով կրթության ենթաոլորտների և աշխատաշուկայի միջև կապեր հաստատելու առավելությունները:

### **Ուսումնառության որակի ապահովում**

26. Մենք շեշտում ենք ուսուցիչների և ուսուցանողների, այդ թվում նաև կամավոր ուսուցանողների և մեծահասակների ուսումնառության և կրթության մեջ ներգրավված այլ մասնագետների առանցքային նշանակությունը: Մենք պարտավորվում ենք մշակել այնպիսի քաղաքականություններ և ռազմավարություններ, որոնք կնպաստեն մեծահասակների ուսուցանողների վերապատրաստմանը և մասնագիտական որակավորումների հետագա բարձրացմանը երեք մակարդակում, այն է՝ աշխատանքի նախապատրաստում ընթացքում և շարունակական վերապատրաստում: Դա անելու ենք համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ, բարելավվելու են նաև նրանց աշխատանքային պայմանները՝ ներառյալ նրանց աշխատավարձը, կարգավիճակը և մասնագիտական զարգացման հետազոտողները: Մենք նաև ընդունում ենք ՄՈՒԿ

կոմպետենցիաների շրջանակները՝ որպես ռազմավարական գործիքներ ուսուցանողների մասնագիտացման և որակավորումների բարձրացման համար:

27. Ընդգծելով դեմառդեմ ուսուցման կարևոր դերը ՄՈՒԿ-ում, մենք պարտավորվում ենք խթանել համապատասխան, ոչ խտրական և գենդերամետ ուսումնական ծրագրեր և ուսումնական նյութեր, որոնք կներառեն ուսուցման այնպիսի զարգացող ոլորտները, ինչպիսիք են գլոբալ քաղաքացիական կրթությունը, կրթությունը կայուն զարգացման համար, կրթություն առողջության և բարեկեցության համար, սոցիալ-հուզական հմտությունները, խաչվող և քննադատական մտածողության հմտությունները, ինչպես նաև թվային հմտությունները:
28. ՄՈՒԿ-ի որակը բարձրացնելու համար մենք կարևորում ենք հետազոտությունների և գնահատումների կարևորությունը՝ քաղաքականությունների ու պրակտիկաների, որակի և համապատասխանության հետագա խթանումը ուղղորդելու: Մա պետք է ներառի մասնակցային հետազոտություններ՝ ուղղված ՄՈՒԿ ծրագրերի նախագծողներին, ուսուցանողներին և մասնակիցներին:

### **Ֆինանսավորման ավելացում**

29. Մենք պարտավորվում ենք ավելացնել ՄՈՒԿ-ի համար հանրային ֆինանսավորումը և ռեսուրսների մոբիլիզացումը և կանխել բյուջետային հատկացումների առկա հետընթացները: ՄՈՒԿ-ը, որպես ցլյանս ուսումնառության բաղադրիչ, պետք է ֆինանսավորվի շահագրգիռ կողմերի լայն բազմազանության, տարբեր նախարարությունների, գործատուների և այլ մասնավոր դերակատարների, տեղական ինքնակառավարման մարմինների և սովորողների կողմից: Ֆինանսավորման նման բանաձևերը պետք է համատեղեն կանոնավոր բյուջետային պարտավորությունները այլ աղբյուրներից և մեխանիզմներից ստացած միջոցների հետ, ներառյալ խառը ֆինանսավորումը և նպատակային հատկացումները կանանց և խոցելի կամ մարզինալացված խմբերի սովորողների համար: Մենք հաստատակամ ենք մեր որոշման մեջ՝ ավելացնելու մեծահասակների կրթության համար պետական ծախսերը ըստ յուրաքանչյուրի երկրի համապատասխան առանձնահատկության՝ ձգտելով ապահովել միջազգայնորեն վերահսկելի ցուցանիշների պրոգրեսիվ աճը, այն է՝ ոչ պակաս քան ՀՆԱ 4-6% կամ կրթության համար նախատեսված պետական բյուջեի ոչ պակաս քան 15-20%:
30. Նկատի ունենալով միջազգային համագործակցության դերը ՄՈՒԿ ֆինանսավորման համապատասխան մակարդակի հասնելու գործում և հաշվի առնելով ՄՈՒԿ-ի հնարավոր ներդրումը բոլոր 17 ԿԶՆ-ների առաջխաղացման գործում, մենք կոչ ենք անում ընդլայնել կրթության զարգացման համագործակցության ֆինանսավորման գլոբալ մեխանիզմների շրջանակը, որպեսզի դրանք էլ աջակցեն ՄՈՒԿ-ին: Հավատարիմ մնալով ԿԶՆ 4-ին հասնելու

մեր ստանձնած պարտավորություններին՝ կոչ ենք անում կրթության համար գոյություն ունեցող գլոբալ հիմնադրամներին, մասնավորապես՝ Կրթության գլոբալ գործընկերությանը և «Կրթությունը չի կարող սպասել» հիմնադրամին, ներառել ՄՈՒԿ-ը ռազմավարություններում, առաջնահերթություններում և իրենց գործընկեր երկրներին տրամադրվող ֆինանսական աջակցություններում: Մենք պարտավորվում ենք աշխատել ֆինանսավորման բացը լրացնելու ուղղությամբ՝ ԿԶՆ 4-ի մեծահասակների գրագիտության նպատակներին հասնելու համար և ինտեգրել հմտությունների ուսուցումը՝ Ջարգացման պաշտոնական օգնության (ԶՊՕ) առկա պարտավորություններն իրականացնելու համար, ներառյալ զարգացած շատ երկրների պարտավորությունները՝ հասնելու ՀՆԱ 0,7 %-ին՝ զարգացող երկրների ԶՊՕ-ների համար:<sup>4</sup>

### Ներառման խթանում

31. Մենք պարտավորվում ենք մեր ջանքերի հիմքում դնել բազմազանությունը, ներառյալ լեզվական բազմազանությունը, ներառականությունը, հասանելիությունը և հավասարությունը՝ ճանաչելով դրանք որպես առաջնահերթություններ մարզինալացված կամ խոցելի անհատների, թերներկայացված և խոցելի խմբերի և համայնքների շրջանում ՄՈՒԿ-ին հասանելիության բարձրացման հարցում: Նաև շատ կարևոր է, որ արդարության և ներառման նպատակներում հատկապես կարևորվեն բնիկ ժողովուրդների իրողությունները և նրանց նկատմամբ պարտականությունները: Այս պարտավորությունը բխում է կրթության՝ որպես մարդու իրավունքի վերահաստատումից, որը ներառում է մասնակցության իրավունքը՝ որպես հզորացման և ակտիվ ու գլոբալ քաղաքացիության հնարավորության ընձեռում:
32. Մենք պարտավորվում ենք զգալիորեն մեծացնել ինչպես ոչ ֆորմալ, այնպես էլ ֆորմալ ՄՈՒԿ ծրագրերին մասնակցությունը և խրախուսել երկրներին հավակնոտ չափորոշիչներ սահմանել սովորողների տարբեր խմբերի մասնակցության համար: Դեռևս ՄՈՒԿ-ին հասանելիություն չունեցող խոցելի բնակչության և մեծահասակների ներառում ապահովելու համար մենք պարտավորվում ենք խթանել ուսումնառության հնարավորությունների մասին իրազեկվածության բարձրացումը և ուղղորդման համակարգերը, ընդլայնել մասնակցությունը և մեծացնել սովորողների մոտիվացիան:
33. Մենք վերահաստատում ենք ՄՈՒԿ-ի համար հուսալի, վավեր, թափանցիկ և հասանելի գենդերազգայուն տեղեկատվական համակարգերի ներդրման կարևորությունը, որը թույլ կտա հետևել մասնակցության և ուսումնառուի շարունակական ներգրավվածության մակարդակին՝ կենտրոնանալով բնակչության թերներկայացված խմբերի վրա, ինչպես նաև օժանդակելով պետական և ոչ կառավարական հաստատությունների, ակադեմիայի,

---

<sup>4</sup> Այս պարտավորությունն արդեն ստանձնվել են որպես ԿԶՆ 17, թիրախ 17.2:

քաղաքացիական հասարակության և անդամ պետությունների միջև գիտելիքի փոխանակմանը:

Ուսումնառության տիրույթների ընդլայնում

34. Մենք վերահաստատում ենք գրագիտության տեսլականը որպես մեծահասակների ուսումնառության և կրթության հիմքում ընկած ուսումնառության և կոմպետենցիաների հաջորդական շարքի կարևոր մակարդակ: Մենք պարտավորվում ենք էապես մեծացնել մեր ջանքերը կյանքի կոչելու համապատասխան քաղաքականությունները ԿԶՆ 4.6-ի նպատակներին հասնելու համար: Սա ներառում համապարփակ և փաստերի վրա հիմնված գենդերային-փոխակերպող, միջուլորտային և ներառական գրագիտության քաղաքականությունների և իրականացման ռազմավարությունների հիմնումը:
35. Մենք աշխատավայրը համարում ենք ուսումնառության համար կարևոր վայր: Աշխատավայրում ցկյանս ուսումնառության մշակույթի ձևավորումը կարևոր է աշխատողների ապահովության և արժանապատիվ աշխատանքը պահպանելու, ինչպես նաև նոր աշխատանքային պահանջներին հարմարվելու և անձնական զարգացման հասնելու համար: Մենք նաև ընդունում ենք, որ աշխատավայրում ուսումնառությունը պետք է նպաստի ավելի ներառական և արդար հասարակությունների կառուցմանը: ՄՈՒԿ-ը խթանում է արդյունավետությունը, արտադրողականությանը և աշխատավայրում բարեկեցությունը և մենք կոչ ենք անում գործատուներին ներդրումներ կատարել ՄՈՒԿ-ում:
36. Ընդունելով կայունության համար կլիմայական գործողությունների հրատապությունն ու առանցքայնությունը՝ մենք պարտավորվում ենք նպաստել կրթությանը հանուն կայուն զարգացման և բարձրացնել իրազեկվածությունը կլիմայական փոփոխությունների պատճառների և հետևանքների վերաբերյալ, որպեսզի բոլոր երիտասարդները և մեծահասակները կարողանան ավելի լավ հասկանալ կայուն զարգացման խնդիրների հրատապությունը և հանդես գալ որպես ուժեղ քաղաքացիներ՝ հարմարեցնելով իրենց սպառման ձևերն ու ապրելակերպը և ակտիվորեն ներգրավվելով շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանմանն ուղղված ժողովրդավարական բանավեճերում և նախաձեռնություններում:
37. Գիտակցելով տեխնոլոգիայի հզոր դերը ՄՈՒԿ-ում, անդամ երկրները պարտավորվում են գտնել թվային խզվածքը նվազեցնելու ուղիներ և խթանել թվային գրագիտությունն ու հմտությունները, ինչպես նաև ձևակերպել ուսումնառության դաշինքների նոր ուղղություններ,

հիմնվելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի նորմատիվ փաստաթղթերի վրա, որոնք սահմանում են գիտելիքների հասանելիությունը որպես շրջանակ (2019 թ. Կրթական բաց ռեսուրսների վերաբերյալ հանձնարարական և 2021 թ. Բաց գիտության վերաբերյալ հանձնարարական) և ուսումնառության համար արհեստական բանականության օգտագործումը (2021թ. Արհեստական բանականության էթիկայի մասին հանձնարարական): Հետևաբար, համակցված ուսումնառության խթանմանը զուգահեռ՝ որպես ՄՈՒԿ առավել կարիք ունեցող մարզին աջակցված մարդկանց և համայնքներին հասնելու արդյունավետ միջոց, մենք նաև կնպաստենք բաց և հասանելի կրթական ռեսուրսների առկայությանը՝ հանուն ընդհանուր և հանրային բարօրության, և կլուծենք ուսումնառության մեջ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված արդարության և ներառականության, գաղտնիության և էթիկայի հետ կապված մարտահրավերները:

38. Հաշվի առնելով COVID-19 համավարակի ազդեցությունը՝ մենք հաստատում ենք սովորելու կարևորությունը անհատի առողջ ապրելակերպի և հանրային առողջություն համար: Մենք գիտակցում ենք, որ անհրաժեշտ է ամրապնդել այս չափանիշները ՄՈՒԿ-ի քաղաքականություններում և ծրագրերում ազգային և տեղական մակարդակներում, օգտագործելով ՄՈՒԿ-ի դրական ազդեցությունը առողջության վրա, այդ թվում նաև տարեցների համար: Առողջության և առողջ ապրելակերպի համար սովորելը ընդգծում է ԿԶՆ 3-ը և ԿԶՆ 4-ը միմյանց կապելու կարևորությունը, ինչպես նաև ՄՈՒԿ-ի և առողջապահության ինտեգրումը բազմաոլորտ քաղաքականության և նախագծերի մեջ:

39. Մենք նաև կարևորում ենք ակտիվ և գլոբալ քաղաքացիության, մեղիագրագիտության և տեղեկատվական գրագիտության կարևորությունը սոցիալական և զարգացման մարտահրավերներին դիմակայելու հարցում: Ուստի մենք խրախուսում ենք նախաձեռնություններին ուժեղացնել քաղաքացիական կրթությունը մեծահասակների համար՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողների տեղեկատվությունը քննադատաբար գնահատելու, տեղեկացված որոշումներ կայացնելու, գործունեությունը և իրենց տեղական համայնքներին և հանրային քննարկումներին նպաստելու կարողությունները: Մենք նաև կարևորում ենք ակտիվ և գլոբալ քաղաքացիության, լրատվամիջոցների և տեղեկատվության կարևորությունը գրագիտության, սոցիալական և զարգացման մարտահրավերներին դիմակայելու հարցում: Ուստի մենք խրախուսում ենք այն նախաձեռնությունները, որոնք ուղղված են մեծահասակների համար քաղաքացիական կրթությունը ամրապնդելուն՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողների՝ տեղեկատվությունը քննադատաբար գնահատելու, տեղեկացված որոշումներ կայացնելու, գործելու պատրաստակամությունը զարգացնելու և իրենց տեղական համայնքներին և հանրային քննարկումներին զգալիորեն նպաստելու կարողությունները:

40. Մենք պարտավորվում ենք օգտագործել Կայուն զարգացման օրակարգ 2030-ը որպես ճանապարհային քարտեզ խաչվող հմտությունների զարգացման համար՝ գիտակցելով, թե գալիք տարիների համար այս օրակարգը ինչպես է խթանելու ՄՈՒԿ-ի բազմակողմ նպատակների միասնական և սիներգետիկ բնույթը: Որակյալ կրթությունն ու ցկյանս ուսումնառությունը իրենցից ներկայացնում են ԿԶՆ 4-ի իրականացման համար կարևոր մեխանիզմներ, ինչպես նաև նախադրյալներ աղքատության հաղթահարման (ԿԶՆ 1), առողջության և բարեկեցության (ԿԶՆ 3), զենդերային հավասարության (ԿԶՆ 5), կրճատվող անհավասարությունների (ԿԶՆ 10), եկամտաբեր զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի (ԿԶՆ 8), ներառական, անվտանգ, դիմացկուն և կայուն քաղաքների (ԿԶՆ 11), արդար, խաղաղ, ներառական, բոնությունից զերծ հասարակությունների (ԿԶՆ 16) և կլիմայական գործողությունների (ԿԶՆ 13) համար: Ավելին, մեծահասակների կրթությունը կրթության իրավունքի մի մասն է և կարևոր նշանակություն ունի մարդու բոլոր իրավունքներ իրացման համար:

### **Միջազգային համագործակցություն ի նպաստ կիրարկման և մշտադիտարկման**

41. Գործողությունների սույն շրջանակի պարտավորությունների կատարումը, և գիտելիքի ու հաջողված փորձերի շարունակական փոխանակման, միմյանցից փոխադարձ սովորելու խթանման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով, ինչպես նաև միջազգային համերաշխության ոգով մենք պարտավորվում ենք շարունակել աջակցել ՄՈՒԿ-ի բարելավմանը և ցկյանս ուսումնառության խթանմանը ուղղված միջազգային համագործակցության նախաձեռնություններին և ներգրավվել դրանցում:

42. Մենք պարտավորվում ենք հատուկ ուշադրություն դարձնել անդամ այն պետություններին, որոնք ԿԶՆ 4-ին և այլ ԿԶՆ-ներին հասնելու համար առանձնահատուկ մարտահրավերների են բախվում, այդ թվում.

- Հակամարտությունից տուժած անդամ պետությունները՝ հաշվի առնելով նրանց ՄՈՒԿ մասնակցության հատուկ կարիքները, ներառյալ փախստականների և տեղահանված բնակչության կարողությունների զարգացում,
- Զարգացող փոքր կղզի-պետություններ (SIDS), հաշվի առնելով նրանց կառուցվածքային խոցելիությունը, որը սրվում է կլիմայի փոփոխություններով,

- Աֆրիկյան պետություններ, որոնք մշտապես բախվում են կրթության մարտահրավերների և առաջարկում են մեծ հնարավորություններ հետագա զարգացման համար, և
- Թույլ զարգացած երկրները (LDC), որոնք շարունակում են պահանջել հատուկ ուշադրություն և նպաստակալին աջակցություն:

43. Մենք կոչ ենք անում ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ որպես Միավորված ազգերի կազմակերպության կրթության առաջատար գործակալություն, աջակցել սույն Գործողությունների շրջանակի իրականացմանը անդամ պետությունների հետ համագործակցությամբ՝ ապահովելով ձեռք բերված առաջընթացի պարբերական վերանայում:

44. Մենք պարտավորվում ենք համապատասխան մեխանիզմների միջոցով առաջ մղել այս Գործողությունների շրջանակը գլոբալ, տարածաշրջանային, ազգային, ենթաազգային և տեղական մակարդակներում՝ հիմնվելով ԿԶՆ 4-ի գլոբալ կառուցվածքի վրա, որը ներառում է այնպիսի մեխանիզմներ և հարթակներ, ինչպիսիք են Մեծահասակների ուսուցման և կրթության համաշխարհային զեկույցը (GRALE), Մշտադիտարկման և ուսուցման համաշխարհային դաշինքը (GAML), Գրագիտության գլոբալ դաշինքը (GAL), Համաշխարհային կրթության մշտադիտարկման զեկույցը (GEMR), ԿԶՆ 4 Կրթություն 2030-ի բարձր մակարդակի ղեկավար կոմիտեն, Կայուն զարգացման քաղաքական գաղթնաժողովը, միջազգային գործընկերների աշխատանքը՝ ներառյալ ոչ կառավարական կազմակերպությունների ջանքերը, և երկրների մակարդակով մշտադիտարկումը: Մենք ողջունում ենք Ցկյանս ուսումնառության աֆրիկյան ինստիտուտի ստեղծումը, որը Մարոկկոյի Թագավորության նախաձեռնությունն է:

45. GRALE-ի ավանդույթի համաձայն՝ մենք վերահաստատում ենք ենք հուսալի, վավեր, թափանցիկ և հասանելի տեղեկատվության կարևորությունը և գենդերազգայուն մշտադիտարկման համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը, և որոնք կարող են համարժեք և՛ ճշգրտորեն տարանջատված տվյալներ տրամադրել սույն Գործողությունների Շրջանակի ուժի մեջ մտնելը պարբերաբար վերահսկելու համար, ինչպես նաև աջակցելու թվային հարթակներին՝ հեշտացնելու գիտելիքների և լավագույն փորձի փոխանակումը անդամ պետությունների և այլ առանցքային ՄՈՒԿ դերակատարների միջև:

46. Մենք ՅՈՒՆԵՍԿՕ-ին կոչ ենք անում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ցկյանս ուսումնառության ինստիտուտի միջոցով համաշխարհային մակարդակով համակարգել մշտադիտարկման գործընթացը՝ հատուկ գործիքների միջոցով պարբերաբար զեկույցելու ՄՈՒԿ-ի առաջընթացի մասին՝

ներառյալ համաշխարհային զեկույցը և CONFINTEA VII-ի միջնաժամկետ վերանայումը 2028 թվականին՝ գնահատելու գրանցված առաջընթացը:

47. Մենք նաև ողջունում ենք Մարոկկոյի Թագավորության առաջարկը՝ ստեղծել հետ-CONFINTEA VII-ի միջնախարարական հանձնախումբ՝ սույն առաջարկությունների շրջանակի արդյունավետ և մասնակցային իրականացմանը աջակցելու նպատակով:
48. Ըստ այդմ, մենք ընդունում ենք Մարաքեշի Գործողությունների Շրջանակը որպես մի փաստատթուղթ, որն ուղորդելու է մեզ ՄՈՒԿ-ի փոխակերպող ներուժը ցկյանս ուսումնառության համատեքստում կիրառելուն՝ սոցիալապես համերաշխ, կատարյալ, ներառական և բոլորի համար կայուն ապագայի համար: